Անահիտ Անտոնյան[1]

ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՕՐԵՆՔԻ ՄԻԱՏԵՍԱԿ ԿԻՐԱՌՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՔԱՂԱՔԱՑԻԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Օրենքի և դատարանի առջև բոլորի հավասարության սահմանադրորեն հռչակված սկզբունքի իրացումը հնարավոր է միայն օրենքի միատեսակ կիրառության ապահովման դեպքում: ՀՀ Սահմանադրության համաձայն՝ վճռաբեկ դատարանը կոչված է ապահովելու օրենքի միատեսակ կիրառությունը: Օրենսդրությունը չի բացահայտում, թե ինչ դատավարական միջոցներով է վճռաբեկ դատարանը ապահովում օրենքի միատեսակ կիրառությունը: Քաղաքացիական դատավարության օրենսգրքում սահմանված են վճռաբեկ դատարանի լիազորությունները, սակայն դրանցից ոչ մեկն ուղղակիորեն ուղղված չէ օրենքի միատեսակ կիրառության ապահովմանը: Տեսական գրականության մեջ ևս այս հարցին պատշաճ ուշադրություն չի դարձվել: Սա էր պատճառը, որ անհրաժեշտություն է առաջացել, որպեսզի ՀՀ սահմանդրական դատարանը իր որոշումներում անդրադառնա վճռաբեկ դատարանի կողմից օրենքի միատեսակ կիրառության հարցին: ՀՀ Սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-690 որոշման[2] մեջ բացահայտել է օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառույթի բովանդակությունը: Այստեղ մասնավորապես նշվում է.

ՀՀ վճռաբեկ դատարանի արդարադատական գործառույթը վճռաբեկության կարգով օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելն է, այսինքն՝

- այն պետք է առաջին հերթին իրականացվի օրենքների և դրանց կատարումն ապահովող նորմատիվ այլ այնպիսի ակտերի իրավական բովանդակության մեկնաբանմամբ, որոնք ստորադաս

---

[1] ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի ասպիրանտ, գիտ. ղեկավար՝ ի. գ. դ., դոցենտ Վ. Հովհաննիսյան:

[2] Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի 2009 թվականի ապրիլի 9-ի թիվ ՍԴՈ-690 որոշումը:

դատարանների կողմից կիրառվել են (կամ չեն կիրառվել) դրանց տարաբնույթ իրավաընկալման արդյունքում,

- վճռաբեկության կարգով սահմանադրական իր վերահսկողական գործառույթի իրականացմամբ, ստորադաս դատարանների դատական ակտերը վերանայելիս և դատական սխալներն ուղղելիս վճռաբեկ դատարանը բացառապես պետք է լուծի իրավունքի իրացման հարցեր,

- որպես սահմանադրորեն նախատեսված շրջանակներում բարձրագույն դատական ատյան՝ վճռաբեկ դատարանը, իր լիազորություններին համապատասխան, կոչված է երաշխավորելու ընդհանուր իրավասության և մասնագիտացված բոլոր դատարաններում մարդու իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության արդյունավետ միջոցների, արդարության, հավասարության պայմաններում և ողջամիտ ժամկետում դատաքննության՝ անձի սահմանադրական իրավունքների անմիջական գործադրումը,

- վճռաբեկ դատարանի սահմանադրական գործառույթից է անմիջականորեն բխում ոչ միայն ընդհանուր և մասնագիտացված ստորադաս դատարանների թույլ տված դատական սխալներն իր իրավասության շրջանակներում ուղղելը, այլև այդ դատարանների կողմից կիրառված նորմատիվ ակտերի (դրանց դրույթների) միասնական ընկալման վերաբերյալ իրավական դիրքորոշում արտահայտելը:

Սահմանադրական դատարանի որոշման մեջ տեղ գտած պարզաբանումը թույլ է տալիս փաստել, որ վճռաբեկ դատարանի կողմից օրենքի միատեսակ կիրառության ապահովմանն ուղղված դատավարական ներգործության հիմնական միջոցը իրավական նորմի մեկնաբանումն է: Ուստի՝ հարկ է պարզել, թե ինչ է իրենից ներկայացնում վճռաբեկ դատարանի կողմից օրենքի միատեսակ կիրառության ապահովմանն ուղղված իրավական նորմի մեկնաբանությունը: ՀՀ Սահմանադրության համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում արդարադատություն իրականացնում են ընդհանուր իրավասության առաջին ատյանի, վերաքննիչ դատարանները և վճռաբեկ դատարանը, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ նաև մասնագիտացված դատարաններ: Այսինքն՝ վճռաբեկ դատարանը օրենքի միատեսակ կիրառությունն ապահովում է արդարադատութ-

յուն իրականացնելուն զուգահեռ: Այն իր լիազորությունների սահմաններում բողոքի հիման վրա ստուգում է ստորադաս ատյանի դատարանի ակտերի օրինականությունն ու հիմնավորվածությունը, ինչի արդյունքում կայացնում է դատական ակտ: Վճռաբեկ դատարանն օրենքի միատեսակ կիրառությունն ապահովում է բողոքի քննության արդյունքում: Կայացնելով որոշում՝ վճռաբեկ դատարանը իրավական դիրքորոշում է հայտնում իրավունքի նորմի բովանդակության վերաբերյալ, այսինքն մեկնաբանում է այն: Այստեղ հարց է առաջանում արդյո՞ք բոլոր գործերով է վճռաբեկ դատարանը իրականացնում իրավունքի նորմի բովանդակության բացահայտում և դրանով իսկ օրենքի միատեսակ կիրառության ապահովում, թե՞ ոչ:

ՀՀ սահմանադրությունը օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու գործառույթը սահմանել է որպես վճռաբեկ դատարանի գործունեության նպատակ: Սահմանադրական դատարանը իր ՍԴՈ-690 որոշման մեջ անդրադարձել է նաև Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի հանձնարարականներին: Այդ Կոմիտեի 1995 թվականի փետրվարի 7-ի թիվ R (95) 5 հանձնարարականում Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների առջև դրված էր նաև հետևյալ պահանջը. «երրորդ ատյանի դատարանում բողոքները պետք է վերաբերեն այնպիսի գործերի, որոնք բխում են այդ դատական ատյանի դերից, օրինակ, այնպիսի գործեր, որոնք...կարող են նպաստել իրավունքի զարգացմանը կամ կարող են նպաստել օրենքի միատեսակ մեկնաբանմանը: Այդ շրջանակը կարող է սահմանափակվել այնպիսի գործերով բողոքարկումներով, որոնք առնչվում են ամբողջ հասարակության համար նշանակություն ունեցող իրավունքի հարցերին: Դիմողից պետք է պահանջվի հիմնավորել, թե ինչով է իր գործը նպաստելու հասնել այդ նպատակներին»: Այս առումով ՀՀ սահմանադրական դատարանը իր որոշման մեջ նշել է, որ վճռաբեկության կարգով սահմանադրական իր վերահսկողական գործառույթի իրականացմամբ, ստորադաս դատարանների դատական ակտերը վերանայելիս և դատական սխալներն ուղղելիս վճռաբեկ դատարանը բացառապես պետք է լուծի իրավունքի իրացման հարցեր: Միևնույն ժամանակ ՀՀ ՔԴՕ **241**[1-ին] հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ վճռաբեկ դատարանի որոշումը պետք է լինի պատճառաբանված, ապահովի օրենքի միատեսակ կիրառումը, ճիշտ մեկնաբա-

նությունը և նպաստի իրավունքի զարգացմանը: Հիշյալ դրույթներից կարելի է ենթադրել, որ յուրաքանչյուր գործով վճռաբեկ դատարանը պարտավոր է ապահովել օրենքի միատեսակ կիրառությունը: Սակայն անհրաժեշտ է անդրադառնալ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմքերին: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վճռաբեկ բողոքն ընդունվում է քննության, եթե վճռաբեկ դատարանը հանգում է այն հետևության, որ՝

1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար.

2) առերևույթ թույլ է տրվել դատական սխալ, որ կարող էր ազդել գործի ելքի վրա, **կամ**

3) առկա է նոր կամ նոր երևան եկած հանգամանք:

Ինչպես նկատում ենք բողոքը վարույթ ընդունելու 1-ին հիմքն օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու խնդրի առկայությունն է: Սակայն կարևոր է հոդվածի բովանդակությունը իրավական տեխնիկայի տեսանկյունից: Այսպես՝ թվարկված հիմքերը միմյանցից բաժանվում են մի դեպքում միջակետով մեկ այլ դեպքում առկա է «կամ» շաղկապը: Հոդվածի նման ձևակերպումը կարելի է մեկնաբանել տարակերպ: Մի դեպքում կարելի է մեկնաբանել, որ 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի առկայությունը միշտ պարտադիր է և դրա հետ միասին պետք է առկա լինի 2-րդ կամ 3-րդ հիմքը, որպեսզի վճռաբեկ դատարանը բողոքը ընդունի վարույթ: Մեկ այլ դեպքում՝ նշված հիմքերը կարող են ընկալվել որպես ինքնուրույն գործող: Առաջին դեպքի քննարկման ժամանակ հարկ է անդրադառնալ բողոքը վարույթ ընդունելու 234-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ հիմքերին և պարզել, թե արդյոք այդ հիմքերի առկայության դեպքերում վճռաբեկ դատարանը միշտ կարող է ապահովել օրենքի միատեսակ կիրառման խնդիր իրեն հատուկ քաղաքացիադատավարական ներգործության միջոցով, այսինքն՝ մեկնաբանելով իրավունք նորմը:

Այն դեպքում, երբ բողոք բերվել է նյութական կամ դատավարական իրավունքի նորմի խախտման կամ սխալ կիրառման հիմքով, և վճռաբեկ դատարանն այդպիսի բողոքը ընդունում է վարույթ, ապա այն առաջին հերթին իրականացնում է օրենքների և դրանց կատարումն ապահովող նորմատիվ այլ այնպիսի ակտերի իրավական բո-

վանդակության մեկնաբանում, որոնք ստորադաս դատարանների կողմից կիրառվել են (կամ չեն կիրառվել) դրանց տարաբնույթ իրավընկալման արդյունքում: Այս պարագայում, կարելի է փաստել, որ ՀՀ վճռաբեկ դատարանը ապահովում է օրենքի միատեսակ կիրառությունը: Սակայն, մեր կարծիքով, այլ է խնդիրն այն դեպքում, երբ բողոք բերվել է դատավարական նորմերի այնպիսի խախտման հիմքով, որը օրենսգրքի 228-րդ հոդվածի համաձայն հանդիսանում է դատական ակտի անվերապահ բեկանման հիմք: Այսպես՝ ՀՀ վճռաբեկ դատարանը իր ԵԿԴ/1118/02/12 քաղաքացիական գործով[1] կայացրած որոշման մեջ նշել է, որ օրենսդիրն անվերապահ բեկանման հիմքերը նախատեսող հոդվածում առանձնացրել է այնպիսի դատավարական սխալներ, որոնք անմիջականորեն կապված են արդարադատության սկզբունքների և դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի խախտումների հետ: Հենց դրանով է պայմանավորված այն հանգամանքը, որ նման խախտումների առկայության պայմաններում դատարանի վճիռը բոլոր դեպքերում ենթակա է բեկանման, և վճիռը բողոքարկող անձը պարտավոր չէ ապացուցել, որ այդ դատավարական խախտումները հանգեցրել են կամ կարող էին հանգեցնել գործի սխալ լուծման: Այդպիսի խախտումների առանձնահատկությունը մյուս դատավարական խախտումների համեմատ կայանում է նրանում, որ դրանք այնքան էական են, որ խաթարում են դատարանի՝ իբրև իրավունքների համապարփակ և արդյունավետ պաշտպանությանը կոչված պետական մարմնի դերն ու նշանակությունը: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված խախտումների բնույթն այնպիսին է, որ դրանք կարող են վերացվել բացառապես դատական ակտի բեկանումից հետո գործի ամբողջ ծավալով նոր քննություն իրականացվելու դեպքում: Նշված պատճառաբանությամբ էլ վերադաս դատարանի կողմից վճռի բեկանման անվերապահ որևէ հիմքի առկայությունը հաստատված լինելու դեպքում կիրառման է ենթակա դատական ակտը բեկանելու և գործը համապատասխան ստորադաս դատարան նոր քննության ուղարկելու լիազորությունը: Հետևաբար՝ վճռաբեկ դատարանը՝ որպես վերադաս ատյան, անվե-

[1] Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԵԿԴ/1118/02/12 քաղաքացիական գործով 2014 թվականի նոյեմբերի 28-ի որոշումը:

բապահ բեկանման հիմքով բողոք ներկայացվելու դեպքում կիրառում է դատական ակտը բեկանելու և գործը համապատասխան ստորադաս դատարան նոր քննության ուղարկելու լիազորությունը և, ըստ էության, իր որոշմամբ չի ապահովում օրենքի միատեսակ կիրառություն: Սակայն, լինում են դեպքեր, երբ բողոք ներկայացվել է նյութական կամ դատավարական նորմի որևէ խախտմամբ, սակայն վճռաբեկ դատարանը, բողոքը վարույթ ընդունելով, պարզում է, որ առկա է դատական ակտի անվերապահ բեկանման հիմք: Այս պարագայում, ինչպես վճռաբեկ դատարանը անուղղակիորեն նշել է իր որոշումներից մեկում, դատարանը չի կարող դուրս գալ բողոքը հիմքերի և հիմնավորումների սահմաններից և պարտավոր է քննության առնել բողոքում նշված նյութական կամ դատավարական նորմի խախտումը[1]: Հետևաբար՝ նշված դեպքում վճռաբեկ դատարանը ևս իրականացնում է իրավական նորմի բովանդակության մեկնաբանում և օրենքի միատեսակ կիրառության ապահովում:

Այլ է նոր կամ նոր երևան եկած հանգամանքների առկայության հիմքով բողոքը վարույթ ընդունելու դեպքը: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.32-րդ և 204.33-րդ հոդվածներում թվարկված են նոր և նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտի վերանայման հիմքերը: Նոր և նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայմանն անդրադարձել է ՀՀ սահմանադրական դատարանը իր մի շարք որոշումներում: Նոր երևան եկած հանգամանքներն այն իրավաբանական փաստերն են, որոնք գործի քննության պահին գոյություն են ունեցել, բայց հայտնի չեն եղել և չէին կարող հայտնի լինել գործին մասնակցող անձանց և գործը քննող դատարանին: Նոր հանգամանքները այն իրավաբանական փաստերն են, որոնք գործի քննության պահին գոյություն չեն ունեցել, առաջացել են դատական ակտի կայացվելուց հետո և հիմք են հանդիսանում ուժ մեջ մտած դատական ակտի վերանայման համար[2]: ՀՀ սահմանադրական դատարանի ՍԴՈ-1049[3] և ՍԴՈ-984[1] ո-

---

[1] Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ 3-207(ՎԴ) քաղաքացիական գործով 2009 թվականի դեկտեմբերի 25-ի որոշումը:

[2] Տե՛ս Պետրոսյան Ռ. Գ., Հայաստանի քաղաքացիական դատավարություն, Երրորդ հրատարակություն, -Եր., ԵՊՀ հրատ., 2012, էջ 539:

[3] Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի 2012 թվականի սեպտեմբերի 28-ի թիվ ՍԴՈ - 1049 որոշումը:

րոշումների վերլուծությունը թույլ է տալիս փաստելու, որ նոր կամ նոր երևան հանգամանքի առերևույթ առկայության դեպքում վճռաբեկ դատարանը պարտավոր է հարուցել վերանայման վարույթ, որի արդյունքում, եթե պարզում է, որ իրականում առկա են այդ հանգամանքները ապա պարտավոր է ուժը կորցրած ճանաչել դատական ակտը: Բեկանելով դատական ակտը վճռաբեկ դատարանը կարող է այն ուղարկել նոր քննության կամ փոփոխել, եթե գործով հաստատված հանգամանքները հնարավորություն են տալիս առանց գործի նոր քննության կայացնելու նոր դատական ակտ[2]: Նոր և նոր երևան եկած հանգամանքներով բողոքի քննության արդյունքում կայացված վճռաբեկ դատարանի որոշումների ուսումնասիրությունը թույլ է տալիս փաստեր, որ ընդհանուր առմամբ, այս գործերով վճռաբեկ դատարանն իրավունքի իրացման խնդիր չի լուծում, իսկ եթե լուծում է ապա այդ գործերով բողոքներում առկա է նոր հանգամանք: Նոր երևան եկած հանգամանքի դեպքում օրենքի միասնական կիրառության ապահովման խնդիր վճռաբեկ դատարանը չի իրականացնում:

Վերոշարադրյալից հետևում է, որ չնայած վճռաբեկ դատարանը Սահմանդրության համաձայն պետք է ապահովի օրենքի միատեսակ կիրառման խնդրի իրացումը և հանդես գա որպես իրավունքի ատյան՝ այնուամենայտիվ այն դատական սխալի ուղղման ֆունկցիա ևս կատարում է: Ոչ բոլոր դեպքերում է, որ վճռաբեկ դատարանը ապահովում է օրենքի միատեսակ կիրառությունը: Ուրեմն՝ վճռաբեկ դատարանի կողմից օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու խնդրի առկայությունը բոլորովին էլ բողոքը վարույթ ընդունելու պարտադիր հիմք չէ: Վճռաբեկ դատարանի որոշումներից ևս բխում է, որ բողոքը վարույթ է ընդունում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածում նշված հիմքերից միայն մեկով. առկա է նյութական կամ դատավարական իրավունքի նորմի խախտում կամ նոր կամ նոր երևան եկած հանգամանք (թիվ ԵՄԴ/0563/02/12 քաղաքացիական գործով 30.04.2015 թ. որոշումը)

---

[1] Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի 2011 թվականի հուլիսի 15-ի թիվ ՍԴՈ - 984 որոշումը:

[2] Տե՛ս Մարկոսյան Տ. Ա., Նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթը քաղաքացիական դատավարությունում, Եր, 2013, ԵՊՀ հրատ., էջ 189:

կամ օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր (թիվ Ա-ՐԱԴ2/0169/02/11 քաղաքացիական գործով 30.04.2015 թ. որոշումը): Հետևաբար՝ գալիս ենք այն եզրահանգման, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված հիմքերը գործում են առանձին-առանձին: Յուրաքանչյուրի առկայությունը հիմք է որպեսզի վճռաբեկ դատարանը վարույթ ընդունի բողոքը: Հարկ է նշել, որ վերոշարադրյալ վերլուծությունը ոչ այնքան իրավական տեխնիկային, որքան վճռաբեկ դատարանի կողմից օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառույթի իրականացման բացահայտմանն էր ուղղված: Ի տարբերություն ՀՀ քաղաքացիական դատվարության օրենսգրքի՝ ՀՀ դատական օրենսգրքի 55.1-ին հոդվածի 1-ին մասում վճռաբեկ բողոք բերելու հիմքերը միմյանցից բաժանված են «կամ» շաղկապով, որը ևս վկայում է, որ այս հիմքերը գործում են ինքնուրույն:

Առաջանում է այլ հարց կապված վճռաբեկ դատարան բողոք բելելու և դատարանի կողմից բողոքը վարույթ ընդունելու հիմքերի հետ:

Անձի դատական պաշտպանության իրավունքը ենթադրում է ոչ միայն խախտված կամ վիճարկվող իրավունքների պաշտպանության և վերականգնման պահանջով դատարան դիմելու, այլև դատական ակտերը բողոքարկելու՝ պետականորեն երաշխավորված հնարավորությունը: ՀՀ սահմանադրական դատարանն իր ՍԴՈ- 754 որոշման[1] մեջ նշել է, որ դատական պաշտպանության իրավունքը բնութագրվում է որպես մարդու և քաղաքացու անօտարելի իրավունք, նրա մյուս իրավունքներն ու ազատություններն ապահովող երաշխիք, նաև՝ որպես օրենքով սահմանված ժամկետներում և կարգով վճռաբեկ դատարան մուտք գործելու և լիարժեք պաշտպանություն ստանալու հնարավորություն (նաև 08.10.2008 թ. ՍԴՈ-765 որոշումներ): Որպեսզի անձն օժտված լինի վճռաբեկ բողոք բերելու իրավունքով անհրաժեշտ է սուբյեկտային, օբյեկտային և ձևական որոշակի նախադրյալների առկայություն, սակայն միևնույն ժամանակ պետք է հաշվի առնել այն հանգամանքը ևս, որ վճռաբեկ բողո-

[1] Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի 2008 թվականի մայիսի 27-ի թիվ ՍԴՈ - 754 որոշումը:

քարկման իրավունքը կարող է իրացվել միայն օրենքով սահմանված հիմքերի առկայության դեպքում: ***Վճռաբեկ բողոք բերելու հիմքերն իրավական այն պայմաններն են, որոնց առկայության դեպքում իրավասու սուբյեկտի վճռաբեկ բողոքը ճանաչվում է իրավաչափ, և այն սահմանված կարգով ներկայացվելու արդյունքում է միայն ՀՀ վճռաբեկ դատարանն իրավասու գործադրել սահմանադրաիրավական կարգավիճակից բխող օրենսդրական իր լիազորությունները:***

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված են այն հիմքերը, որոնց առկայության դեպքում անձը կարող է ներկայացնել վճռաբեկ բողոք, ինչպես նաև սահմանված են բողոքին ներկայացվող պահանջները:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 226-րդ հոդվածի համաձայն.

«Վճռաբեկ բողոք բերելու հիմքերն են՝

1) դատական սխալը՝ նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի խախտումը, որը կարող էր ազդել գործի ելքի վրա.

2) նոր երևան եկած կամ նոր հանգամանքները»:

Ինչպես նկատում ենք բողոք բերելու հիմքերի մեջ նշված չէ, այն դեպքը, երբ առկա է օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու խնդիր: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածը սահմանում է վճռաբեկ բողոքին ներկայացվող պահանջները:

Անձի դատական պաշտպանության իրավունքին համապատասխանում է ՀՀ-ում սահմանված դատական համակարգի մեջ մտնող ընդհանուր իրավասության առաջին ատյանի, վերաքննիչ և վճռաբեկ դատարանների պարտականությունը՝ քաղաքացիական դատավարության կարգով իրականացնելու տվյալ սուբյեկտիվ իրավունքը: Վճռաբեկ դատարանում անձի իրավունքների արդյունավետ պաշտպանության համար դատարանը պարտավոր է վարույթ ընդունել անձի՝ օրենքի պահանջների պահպանմամբ ներկայացված բողոքը: Տրամաբանությունը այն է, որ վճռաբեկ դատարանի կողմից վճռաբեկ դատարան բողոք բերելու հիմքերը և վճռաբեկ դատարանի կողմից բողոքը վարույթ ընդունելու հիմքերն իրենց բովանդակությամբ պետք է նույնական լինեն, որպեսզի անձի բողոքարկման իրավունքը իրացվի: Բողոքը վարույթ ընդունելու հիմքերը բողոք բերած անձի կողմից մատնանշված իրավական այն պայմաններն են, որոնք

առկայությունը վճռաբեկ դատարանի կողմից հավաստվելու դեպքում բողոքը ենթակա է ընդունման վարույթ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 226-րդ և 234-րդ հոդվածներում սահմանված բողոքարկման հիմքերը և բողոքը ընունելու հիմքերը նույն բովանդակությունը չունեն: Որպես բողոք բերելու հիմք 226-րդ հոդվածում նշված չէ օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու հիմքով բողոք բերելու հնարավորությունը:

Փաստորեն, ստացվում է այնպես, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը՝ «բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար» բողոք բերելու հիմք չէ, բայց կարող է լինել բողոքը վարույթ ընդունելու հիմք: Ավելին՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի 2-րդ մասն ունի հետևյալ բովանդակությունը. «Վճռաբեկ բողոքը սույն օրենսգրքի 234 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով ներկայացնելու դեպքում բողոքը բերած անձը պետք է հիմնավորի, որ դրա վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կնպաստի օրենքի միատեսակ կիրառության ապահովմանը»: Առաջին հերթին անհասկանալի է «բողոքն օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով ներկայացնելու դեպքում» արտահայտությունը: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածը չի վերաբերում անձի վճռաբեկ բողոք բերելու հիմքերին, այն վերաբերում է բողոքը վարույթ ընդունելուն: Անձի բողոք բերելու հիմքերը սահմանված են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 226-րդ հոդվածում, այդ հիմքերը սպառիչ են, իսկ այդ հոդվածում նշված չէ, որ անձը կարող է բողոք բերել այն դեպքում, երբ առկա է օրենքի միատեսակ կիրառման խնդիր: Տրամաբանությունը այն է, որ, եթե անձը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 226-րդ հոդվածի համաձայն վճռաբեկ բողոք չի կարող ներկայացնել որևէ հիմքով, հետևաբար՝ չի էլ կարող հիմնավորել այդ հիմքը 231-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան: Այս առումով առաջարկում ենք ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 226-րդ հոդվածում սահմանել բողոք բերելու ևս մեկ հիմք այն է՝ «բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար»: Այս

դեպքում օրենսգրքի 231-րդ հոդվածի 2-րդ մասի առկայությունը տրամաբանական կլինի, իհարկե, եթե օրենսգրքի 234-րդ հոդվածին հղում կատարելու փոխարեն հղում կատարվի 226-րդ հոդվածի համապատասխան հիմքին:

Հարկ ենք համարում անդրադառնալ նաև վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումներին: Վճռաբեկ դատարանը օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու գործառույթն իրականացնելիս իր որոշման մեջ մեկնաբանում է ստորադաս դատարանների կողմից կիրառված իրավական նորմերը: Ընդհանուր առմամբ, իրավական նորմերի մեկնաբանումը կարելի է սահմանել, որպես դրանց բովանդակության հստակեցում, որն ուղղված է դրանցում օրենսդրի կամքի բացահայտմանը: Մեկնաբանման գործընթացում սահմանվում է իրավական նորմի իմաստը և գործողության ոլորտը, նրա հիմնական նպատակը և սոցիալական ուղղվածությունը, իրավական կարգավորման ոլորտում դրա տեղը, բացահայտվում է դրա ընդունման հասարակական-պատմական միջավայրը: Ըստ սուբյեկտների առանձնացվում են իրավական նորմի մեկնաբանման երկու տեսակներ՝ պաշտոնական և ոչ պաշտոնական: Պաշտոնական մեկնաբանումը լիազորված պետական մարմինների կողմից իրականացվող մեկնաբանումն է, որն ունի համապարտադիր նշանակություն: Պաշտոնական մեկնաբանումն իրականացվում է հատուկ սահմանված կարգով, որի արդյունքում կազմվում է վերջնական փաստաթուղթ: Այդ փաստաթուղթն ունի իրավաբանական ուժ և համապարտադիր նշանակություն: Ըստ բովանդակության պաշտոնական մեկնաբանությունը տարանջատվում է նորմատիվի և կազուալի: Նորմատիվ մեկնաբանումը տարածվում է նորմի գործողության շրջանակն ընդգրկող անորոշ թվով անձանց և իրավահարաբերությունների վրա, իսկ կազուալ մեկնաբանումը տրվում է որոշակի դեպքի, իրավիճակի կապակցությամբ[1]: Այսպես ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Որոշակի փաստական հանգամանքներ ունեցող գործով վճռաբեկ դատարանի կամ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտի հիմնա-

[1] Տե՛ս Нерсесянц В. С., Общая теория права и государства, М., 2000. էջ 500, 501:

վորումները (այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները) պարտադիր են դատարանի համար նույնանման փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ, բացառությամբ այն դեպքի, երբ վերջինս ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ դրանք կիրառելի չեն տվյալ փաստական հանգամանքների նկատմամբ»: Այսինքն՝ վճռաբեկ դատարանի կողմից օրենքի միատեսակ կիրառությանն ուղղված օրենքի մեկնաբանությունները հետագայում այլ դատարանների համար դառնում էն պարտադիր նույնանման գործեր քննելիս, ինչը ապահովում է միասնական դատական պրակտիկայի ձևավորումը: Սա ենթադրում է, որ վճռաբեկ դատարանի կողմից օրենքի մեկնաբանումը իրենից ներկայացնում է պաշտոնական մեկնաբանման ձև, քանի որ վճռաբեկ դատարանը լիազորված է ապահովել օրենքի միատեսակ կիրառությունը: Միևնույն ժամանակ հաշվի առնելով ՀՀ դատական օրենսգրքի հիշյալ դրույթը կարելի է փաստել, որ վճռաբեկ դատարանի կողմից տրված մեկնաբանումը նորմատիվ մեկնաբանում է, քանի որ այլ նմանատիպ դեպքերի վրա ևս տարածվում է: Վճռաբեկ դատարանի օրենքի մեկնաբանությունները պարտադիր են միայն ստորադաս դատարանների համար: Որքան էլ, որ բարձրագույն դատական ատյանի տված մեկնաբանությունները կարող են կարևոր նշանակություն ունենալ, միևնույնն է այլ պետական մարմինների և պաշտոնատար անձանց համար օրենքը դրանց պարտադիրությունը չի նախատեսել: Չնայած դրան՝ պրակտիկան ցույց է տալիս, որ մյուս իրավակիրառողների համար ևս այդ դիրքորոշումները ունեն ուղղորդիչ նշանակություն, իսկ՝ օրենսդրական նախաձեռնություն ունեցող սուբյեկտների համար՝ երբեմն կարող են դառնալ հիմք օրենսդրական որոշակի փոփոխություններ կամ լրացումներ կատարելու համար: Դատարանների համար վճռաբեկ դատարանի կողմից տրված օրենքի մեկնաբանությունների պարտադիրությունը դրսևորվումն այն է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքը 234-րդ հոդվածը վարույթ ընդունելու հիմք է նախատեսել օրենքի միատեսակ կիրառության խախտման այն դեպքը, երբ բողոքարկվող դատական ակտում որևէ նորմի մեկնաբանությունը հակասում է Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի որոշման մեջ տվյալ նորմին տրված մեկնաբանությանը: Սա ենթադրում է, որ

վճռաբեկ դատարանը կարող է բեկանել նման դատական ակտը, ուղարկել նոր քննության կամ փոփոխել այն:

Վճռաբեկ դատարանի նորմատիվ մեկնաբանությունները գործող իրավական նորմը չեն փոփոխում, դրա գործողության վրա չեն ազդում, այլ բացահայտում են դրա իմասը, կոնկրետացնում, որոշակիացնում են դրա գործողության ոլորտը, սահմանում են դրա իրացման մեխանիզմը: Վճռաբեկ դատարանի մեկնաբանումը նոր վարքագծի կանոն չի սահմանում, այլ բացահայտում է արդեն իսկ գործող իրավական նորմը: Իրավական գրականության մեջ կարծիք է հայտնվել, որ իրավական դիրքորոշման մեջ տեղ գտած իրավական նորմի մեկնաբանությունը իրավական նորմեր չեն, այլ իրենցից ներկայացնում են իրավական դրույթներ[1], որոնք բացահայտում են այս կամ այն իրավական նորմի բովանդակությունը: Դատարանները իրենց որոշումները կայացնելիս հղում են կատարում ոչ միայն հարաբերությունները կարգավող իրավական նորմին, այլև վճռաբեկ դատարանի որոշմանը, եթե այդպիսին կա: Հարկ է նշել, որ օրենքի մեկնաբանություն պարունակող վճռաբեկ դատարանի որոշումները չունեն ինքնուրույն նշանակություն, դրանց գործողությունը ուղղակիորեն կախված է այն իրավական նորմի գործողությունից, որը մեկնաբանվում է և այդ նորմի ուժը կորցնելու դեպքում վճռաբեկ դատարանի որոշումը ևս նշանակություն չի ունենա դատարանների համար: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նորմատիվ մկենաբանումը կապված է իրավական նորմի կիրառման հետ, նպատակ ունի ապահովել օրենքի ճիշտ և միատեսակ կիրառումը, մեր կարծիքով, պետք է համաձայնել իրավաբանական գրականության մեջ արտահայտված այն կարծիքի հետ, որ դրանք ունեն օժանդակող բնույթ:[2] Դրանք տրվում են ի կատարումն օրենքի, ճիշտ է նոր դրույթներ չեն սահմանում, բայց ապահովում են օրենքի ճիշտ իրացումը: Ն. Կոնդրատենկոյի կարծիքով՝ դատական ակտում տեղ գտած իրավական դրույթները լրացուցիչ իրավական կարգավորում են իրավական նորմի գործողության ոլորտում գտնվող իրավահա-

[1] Տե՛ս Карташов В. Н., Применение права, Ярославль, 1980, էջ 55:

[2] Տե՛ս Черданцев А. Ф., Толкование советского права, М., 1979, էջ 153:

բաբերությունները[1]: Այս կարծիքի հետ համաձայնել չի կարելի, քանի որ նոր իրավակարգավորում սահմանելու դեպքում, այս ակտերը պետք է պարտադիր նշանակություն ունենային բոլոր իրավակիրառողների համար, մինչդեռ նման կարգավորում վճռաբեկ դատարանների համար չկա: Այս տեսակետը ճիշտ է ՀՀ սահմանադրական դատարանի որոշումների համար:

Ինչպես արդեն նշել ենք, վճռաբեկ դատարանի՝ որպես բարձրագույն դատական ատյանի, իրավական դիրքորոշումներին այլ դատարանների համար պարտադիր բնույթ տալն իր մեջ պարունակում է նախադեպային իրավունքին բնորոշ տարրեր: Այս առիթով Ի. Յու. Բագդանովսկայան հետևություն է արել, որի համաձայն՝ «Ներկայումս նույնիսկ ընդհանուր իրավունքի պետությունների դատարանները զբաղվում են ստատուտների մեկնաբանմամբ և սրանք իրենց բնույթով հանդիսանում են ոչ թե մաքուր նախադեպեր, այլ «նախադեպ մեկնաբանություններ»: Ժամանակակից նախադեպային իրավունքը հենց այսպես է զարգանում»[2]: Ա. Բ. Վենգերովը սահմանելով ՌԴ բարձրագույն դատարանի պլենումի որոշումների բնույթը դրանք անվանել է «իրավական նորմի մեկնաբանման յուրօրինակ նախադեպ»: Նրա կարծիքով՝ հարկ է առանձնացնել «դատական նախադեպ» և «մեկնաբանման նախադեպ» հասկացությունները: Վերջինը ուղղված է գոյություն ունեցող նորմի պարզաբանմանը, մեկնաբանմանը, իսկ առաջինը դատարանների կողմից նոր նորմի ստեղծմանը[3]: Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները ևս հանդիսանում են օրենքի մեկնաբանման արդյունք և միայն այս առումով կարող են հանդիսանալ նախադեպային: Սակայն հարկ է նշել, որ վճռաբեկ դատարանի ոչ բոլոր որոշումներն են իրենց մեջ պարունակում օրենքի մեկնաբանություն վերաբերյալ իրավական դիրքորոշումներ, իսկ վճռաբեկ դատարանն իր որոշումներում հաճախ

---

[1] Տե՛ս Н. Кондратенко (кандитат, юр. наук,), Значение постановлений и разъяснений пленума высшего арбитражного суда российской федерации для развития судебной арбитражной практики:

[2] Տե՛ս Богдановская И. А., Судебный прецедент-источник права//Государство и право.2000, И 12, էջ 18:

[3] Տե՛ս Венгеров А. Б., Роль судебной практики в развитии сожетского права: Автореф. Дис…канд., Юр. Наук., М., 1966, էջ 13:

կրկնում է նույն հարցի վերաբերյալ իրավական դիրքորոշումը[1]: Մեր կարծիքով, նախադեպային բնույթ ունեն վճռաբեկ դատարանի միայն այն որոշումները, որոնցում իրավական նորմի մեկնաբանման վերաբերյալ արտահայտնված իրավական դիրքորոշումը դատական պրակտիկայում ձևավորվում է առաջին անգամ կամ փոփոխում, ընդլայնում է նախկինում այդ հարցի վերաբերյալ կայացված իրավական դիրքորոշումը:

Ի ամփոփումն վերոգրյալի հարկ է նշել.

1. Վճռաբեկ դատարանի կողմից օրենքի միատեսակ կիրառության ապահովմանն ուղղված քաղաքացիադատավարական ներգործության միջոցը իրավական նորմի մեկնաբանումն է:

2. Օրենքի միատեսակ կիրառության ապահովելու գործառույթը վճռաբեկ դատարանի գործունեության նպատակն է, սակայն ոչ բոլոր գործերով է վճռաբեկ դատարանը ապահովում օրենքի միատեսակ կիրառություն:

3. Դատական ակտի անվերապահ բեկանման հիմքով բերված բողոքը քննելիս դրանց առկայության դեպքում, ինչպես նաև նոր կամ նոր երևան եկած հանգամանքների առկայությամբ դատական ակտը վերանայելիս վճռաբեկ դատարանը օրենքի միատեսակ կիրառության խնդիր չի լուծում:

4.Վճռաբեկ դատարանի կողմից իրավական նորմի մեկնաբանումը իրենից ներկայացնում է պաշտոնական նորմատիվ մեկնաբանում, որը պարտադիր է ստորադաս դատարանների կողմից նույնանման փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ:

5. Վճռաբեկ դատարանն իրավական նորմի մեկնաբանությամբ վարքագծի կանոններ չի սահմանում, այլ միայն բացահայտում է իրավական նորմի բովանդակությունը: Այդպիսի մեկնաբանությունները տրվում են ի կատարումն իրավական նորմի և ունեն օժանդակող նշանակություն:

6. Վճռաբեկ դատարան բողոք բերելու հիմքերը և վճռաբեկ դատարնի կողմից բողոքը վարույթ ընդունելու հիմքերը պետք է նույ-

---

[1] Տե՛ս Г. А. Василевич, Судебный прецедент в национальной правовой системе, материалы международной научно-практической конференции 13.05.2011 թ., էջ 23:

նաբովանդակ լինեն, քանի որ անձի դատական պաշտպանության իրավունքին համապատասխանում է դատարանի պարտականությունը՝ օրենքի պահանջների պահպանմամբ ներկայացված բողոքը ընդունել վարույթ:

7. Առաջարկում ենք ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 226-րդ հոդվածը լրացել նոր կետով՝ հետևյալ բովանդակությամբ. «բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար.»:

Анаит Антонян
Аспирант кафедры гражданского процесса ЕГУ

ПРОБЛЕМЫ ГРАЖДАНСКО-ПРАВОВЫХ МЕР ВОЗДЕЙСТВИЯ ВЕРХОВНЫМ СУДОМ НАПРАВЛЕННЫЕ НА ОБЕСПЕЧЕНИЕ ЕДИНООБРАЗНОГО ПРИМЕНЕНИЕ ЗАКОНА

В статье рассматриваются гражданско-правовые меры, направленные на обеспечение единообразного применение закона. В соответствии с Конституцией

РА, главная цель деятельности Кассационного суда заключается в обеспечении единообразного применения закона. Однако, ни одно полномочие, определенное законодательством, не направлено на обеспечение этой цели. В работе в качестве гражданско-правовой меры представляется толкование правовой нормы Кассационным судом. В статье затронуты такие вопросы, как основания для принесения кассационного протеста и основания для принятия кассационного протеста к производству,чтобы выяснить, обеспечивает ли Кассационный суд единообразное применение закона по каждому делу.

Anahit ANTONYAN
PHD Student of the YSU Chair of Civil Procedure

THE PROBLEMS OF CIVIL LAW MEASURES MADE BY THE COURT OF CASSATION AIMED AT ENSURING A UNIFORM APPLICATION OF LAW

This article presents the problems of civil law measures aimed at ensuring a uniform application of the law. In accordance with the Constitution of the Republic of Armenia, the main objective of the Court of Cassation is to ensure a uniform application of the law, but there is no specific authority for that purpose. The interpretation of legal norms as a measure of ensuring a uniform application of the law is considered in the article. The aticle deals with issues like grounds for filing an appeal and initiating proceedings on the appeal to find out whether in each case the Court of Cassation ensures a uniform application of the law.

Բանալի բառեր՝ *վճռաբեկ դատարան, օրենքի միատեսակ կիրառություն, քաղաքացիադատավարական ներգործության միջոցներ, իրավական նորմի մեկնաբանություն:*
Key words: *Court of Cassation, uniform application of law, civil law measures, interpretation of legal norms.*
Ключевые слова: *Кассационный суд, единообразное применение закона, гражданско-правовые меры, толкование правовых норм.*